

Ստեփաննոս Նազարեան



Միքայէլ Նալբանդեան



Խաչատուր Աբովեան

# ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Մօրըս համեղ կաթի պէս,
Դու հայ բարբառ, քաղցր ես.
Ուրախ, տխուր ժամերիս
Սերտ, անբաժան ընկեր ես։
Թէ դարդ ունեմ, դարդոտ ես,
Թէ ուրախ եմ, խնդում ես.
Թէ պայքարն է ինձ կանչում,
Քաջալեր ես ինձ հնչում։
Իսկ թէ ոսոխ դաւ մտած՝
Թունոտ նետն է ինձ ուղղում,
Ահազանգ ես դու զարկում,
Շանթ ու կրակ արձակում։
Ուր որ լինեմ, ուր որ երթամ,
Ես առանց քեզ կեանք չունեմ.
Անտէր մի թող, ես եթիմ եմ,
Ես առանց քեզ կկորչեմ։
Մի գանձ ունեմ ես աշխարհում—
Այդ իմ կեանքն է թանգարժէք.
Թէ պահանջեն, կեանքս կտամ.
Բայց իմ լեզուն—ոչ երբէք։

Գ. Ք. ՄԿՐՏՈՒՄԵԱՆ.

30 ամեայ.